Արմեն Նարգիզյանի հիշատակին



Հայաստանի սրտաբանությունը կրեց ծանր կորուստ: Ստեղծագործական ծաղկունքի տարիքում կյանքից հեռացավ անվանի սրտաբան, բժշկական գիտությունների դոկտոր, Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտի սրտային ամբավարարության բաժանմունքի ղեկավար, Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի գլխավոր քարտուղար Արմեն Բյուզանդի Նարգիզյանը:

Արմեն Նարգիզյանը ծնվել է 1952թ. Երևանում: 1969թ. ոսկե մեդալով ավարտել է Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել է Երևանի պետական բժշկական համալսարանը, որն ավարտել է 1976թ.: Չարենցավանի քաղաքային հիվանդանոցում 2 տարի որպես թերապևտ աշխատելուց հետո, Արմեն Նարգիզյանը 1978–1980թթ. աշխատել է Երևանի պետական բժշկական համալսարանում որպես կրտսեր գիտաշխատող: 1980–1983թթ. որպես ասպիրանտ ուսանել է Համամիութենական գիտական սրտաբանական կենտրոնում, որն ավարտելով 1983թ. փայլուն կերպով պաշտպանել է թեկնածուական թեզը «Միոկարդիալ մետաբոլիզմի որոշ սուբստրատների արտերիովենոզ տարբերությունը շողացող առիթմիայով հիվանդների մոտ սինուսային ռիթմի վերականգնումից առաջ և հետո» թեմայով: 1984 թվականից Արմեն Նարգիզյանը աշխատել է Սրտաբանության ԳՀԻ-ում որպես գիտաշխատող, իսկ 2004 թ.-ից ի վեր՝ որպես սրտային անբավարարության բաժանմունքի գիտական ղեկավար: 2001թ. Արմեն Բյուզանդի Նարգիզյանը պաշտպանել է դոկտորական գիտական թեզը «Իշեմիկ ծագման քրոնիկ սրտային անբավարարության ֆարմակոթերապիայի օպտիմիզացումը» թեմայով:

Արմեն Նարգիզյանի հետազոտությունների արդյունքները ամփոփված են ավելի քան 150 գիտական աշխատություններում, 1 մենագրությունում, 40 զեկույցներում, որոնք ներկայացվել են սրտաբանների համաշխարհային և եվրոպական վեհաժողովներում: 1996 թվից նա Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի գլխավոր քարտուղարն էր, Եվրոպական սրտաբանների միության պատվավոր անդամ, սրտային անբավարարության Եվրոպական միության անդամ:

Հայաստանի բժշկական հանրությունը կորցրել է ֆունդամենտալ և գործնական սրտաբանության ասպարեզի մեծ մասնագետի, փայլուն կլինիցիստի, մեծ գիտնականի, որը միշտ եղել է արդի սրտաբանության զարգացման խաչմերուկներում՝ նպաստելով իր երկրում սրտային անբավարարության բուժման զարգացմանը:

Այս տաղանդավոր, ճշմարիտ և հմայիչ մարդուն բնորոշ էին անսահման բարությունը և պարզությունը, պրոֆեսիոնալիզմը, անմնացորդ նվիրումը գործին:

Իր ողջ գիտակցական և գիտական կյանքի ընթացքում նա շրջապատված էր իր ընտանիքի, գործընկերների և հիվանդների սիրով ու հարգանքով:

Գնահատելով Արմեն Նարգիզյանի 55-ամյա կյանքի ուղին, կարելի է ամենայն վստահությամբ ասել, որ այն արժանավոր Գիտնականի, Բժշկի, Մարդու ուղի է:

Սրտաբանության
գիտահետազոտական
ինստիտուտ
Հայաստանի սրտաբանների
ասոցիացիա